

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Աստուած առաւ արի մը լոյս,
 Խառնեց անոր շիթ մը ցօղ.
 Դըրաւ հոն կայծ մը շանթէն,
 Շաղեց մատովն ըստեղծող.

Յետոյ, մասնիկ մ'առաւ փոխ
 Աստղերուն լուռ նըլագէն,
 Միստիք բոյրէն վարդերուն,
 Զեփիւռին խօլ քըմայքէն.

Արշալոյսին ամօթիսած
 Շիկնումէն ու խոր տրոփէն
 Ծովուն սըրտին, եւ նետեց
 Այդ զանգուածին մէջ հրեղէն.

Ապա, դեռ հոն չփրչած
 Իր կենսատու շունչը մեծ,
 Գորովի մէջ թաթիւեց զայն,
 Խենթութիւնով համեմեց.

Օծեց կաթիլ մ'արցունքով
 Ու վրան սրըսկեց հեշտութիւն.
 'Ի ահա ծընաւ գողտր ու նուրբ
 Էակ մը փոքր ու սիրուն.

Կը թըռչտէր, բայց թըռչուն չէր,
 Կը բուրէր, բայց չէր ծաղիկ.
 Եւ ունէր շունչ մը գըգուող՝
 Թէպէտ եւ չէր զեփիւռիկ.

Էակ մ'աղւոր ու մաքուր՝
 Ինչպէս հրեշտակ մ'ոսկեհոյր,
 Ու դեւի պէս անառակ...
 - Եւ այդ էակը Սէրն էր:

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ